



№ 201

20.05.2015թ

Ք. Եղվարդ, Չարենցի 196  
Յեռ./Ֆաքս (+374 224) 2-23-75  
Էլ. փոստ nairii.bk@yandex.ru

ԵՂՎԱՐԴԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ  
Ռ. ՄԱՆՑԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 18.05.2015թ № Ա-62 հարցմանը՝ տեղեկացնում եմ, որ 2015թ հունվար-մայիս ամիսների ընթացքում <<Նաիրիի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ են դիմել շների կողմից մարմնական վնասվածք ստացած 16 մարդ, որից 8-ը Եղվարդ քաղաքի բնակիչներ: Ըստ ծանրության աստիճանի, առանձնացվում էր Ձովունի գյուղի բնակիչ, 2 տարեկան երեխայի շան կծածի դեպքը: Վերջինիս վնասվածքը գլխի շրջանում էր, ստացել էր գանգուղեղի ցնցում և տեղափոխվել Երևան քաղաք: Մնացած բոլոր դեպքերը միջին աստիճանի են, վնասվածքները եղել են վերին և ստորին վերջույթների շրջանում: Բոլոր հիվանդներն, ըստ սխեմայի, ստացել են հակափայտացման անատոքսին և հակակատաղության պատվաստանյութ:



Եղվարդի Բժշկական Կենտրոն»  
ՓԲԸ տնօրեն՝

Ա. Ռ. ՆԱՉԱՐՅԱՆ